POLICY FORUM ARMENIA
Better Policies. Better Future.

Փետրվար 15. 2015
Էլ. փոստ: forum@pf-armenia.org
Կայք: http://www.pf-armenia.org

Policy Forum Armenia-ի Ընտրական «Մև ցուցակ»

Մեր նախորդ զեկույցում տեղի գտած հետազոտությունների հիման վրա եզրակացրել էինք որ ՀՀ-ում ընտրակեղծիքները դարձել են պակաս ակնհայտ և դիտարկելի, մնալով նույնքան արդյունավետ ընտրությունների կանխորոշված արդյունք ապահովելու տեսանկյունից: Այսօր հարկ ենք համարում նշել, որ իշխանությունները ոչ միայն չեն վերացրել ընտրակեղծիքների սկզբնաղբյուրներն ու կեղծարարության հանցագործ մեխանիզմները, ավելին՝ ուղղակի և անուղղակի կերպով մինչ օրս օգտագործում են դրա համար անհրաժեշտ միջոցներն ու լծակները: Ստեղծված պայմաններում արդար և ազատ ընտրությունների անցկացումը ՀՀ-ում համարում ենք անհնար:

Այնուամենայնիվ ընտրություններին մասնակցել ցանկացող քաղաքացիներին կոչ ենք անում չվաճառել իրենց ձայնը, չգնալ գործարքների և ցուցաբերել քաղաքացիական բարձր գիտակցություն:

Ընտրություններին մասնակցող ընդդիմադիր թեկնածուներին կոչ ենք անում միավորվել: Այս պայմաններում միայն միավորման միջոցով է հնարավոր ժողովրդի ձայնը լսելի դարձնել:

Ընդդիմադիր կուսակցություններին, քաղաքացիական հասարակությանը և միջազգային դիտորդ կազմակերպություններին որպես ուղեցույց ստորև ներկայացնում ենք մեր հետազոտությունների հիման վրա ընտրված **20 ընտրատարածքներ**, որտեղ տեղի են ունեցել ընտրակեղծիքների առավել մեծ ծավալներ: Հորդորում ենք բոլոր շահագրգիռ կողմերին ուշի-ուշով հետևել փետրվարի 18-ին այս ընտրատեղամասերում կայանալիք գործընթացին:

Մենք համոզված ենք, որ երկրի առաջ ծառացած հիմնախնդիրները կարող են լուծվել միայն ու միայն իշխանափոխության միջոցով, որն իր հերթին տեղի կունենա ժողովրդի միասնական կամքի առկայության դեպքում:

# # #

PFA-ը անկախ, շահույթ չհետապնդող միավորում է, որի նպատակն է ամրապնդել Հայաստանի տնտեսական զարգացման և ազգային անվտանգության շուրջդիսկուրսը՝ այդպիսով նպաստելով Հայաստանում հանրային քաղաքականության կերտմանը: PFA-ի այս և այլ զեկույցները, որոնք գնահատականներ են տալիս Հայաստանում և Սփյուռքում տեղի ունեցող առանցքային զարգացումներին, հասանելի են www.pf-armenia.org/reports հղումով:

Աղյուսակ. PFA-ի «Սև ցուցակ», կազմված 2012-ի ԱԺ ընտրությունների պաշտոնական արդյունքների հիման վրա [1]

Տեղ. N.	Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը և անվանումը	Տեղամասային Ընտրական Հանձնաժողովի Նախագահ (Կուսակցություն)
18/8	Արարատ Արարատ (քաղաք), Թիվ 5 դպրոց	Նշանյան Ազատ Նշանի (ՀՅԴ)
23/46	Գեղարքունիք Փամբակ, Փամբակ համայնքի միջնակարգ դպրոց	Մելիքյան Անդրանիկ Նապոլեոնի (ՀՀԿ)
23/49	Գեղարքունիք Գեղամասար, Գեղամասար համայնքի միջնակարգ դպրոց	Հարությունյան Համլետ Վանյայի (ՀՀԿ)
23/58	Գեղարքունիք Սոթք, Սոթք համայնքի միջնակարգ դպրոց	Ոսկանյան Դերենիկ Գարուշի (ՀՀԿ)
23/59	Գեղարքունիք Կութ, Կութ համայնքի միջնակարգ դպրոց	Թյունիբաբյան Վանո Համբարձումի (ՀՅԴ)
24/41	Գեղարքունիք Ծովակ, Միջնակարգ դպրոց	Ավետիսյան Վարուժան (ՀՀԿ)
37/18	Սյունիք Ակներ, Դպրոց	Առաքելյան Վաչագան Հենրիկի (ԲՀԿ)
37/19	Սյունիք Արավուս, Տարրական դպրոց	Բագրատյան Կոլյա Աշոտի (ՀՅԴ)
37/21	Սյունիք Խնածախ, Մշակույթի տուն	Առաքելյան Գագիկ Հենրիկի (ԲՀԿ)
37/22	Սյունիք Խնձորեսկ, Մշակույթի պալատ	Մինասյան Էդիկ Եղիշեի (ՀՀԿ)
37/29	Սյունիք Հարթաշեն, Միջն. Դպրոց	Միրումյան Արտաշես Ժորայի (ԲՀԿ)
37/30	Սյունիք Ներքին Խնձորեսկ, Միջն. Դպրոց	Փարսյան Գրենիկ Գրիշայի (ՀՀԿ)
37/39	Սյունիք Տեղ, Թիվ 2 միջն. Դպրոց	Ջհանգիրյան Գյուլնարա (ՀՀԿ)
37/42	Սյունիք Քարաշեն, Մշակույթի տուն	Ալեքսանյան Ակսել Զավենի (ՀՅԴ)
38/40	Սյունիք Ներքին Հանդ, Ներքին Հանդ համայնքի Ակումբ	Մարտիրոսյան Վոլոդյա Սամսոնի (ԲՀԿ)
38/65	Սյունիք Ագարակ (քաղաք), Ագարակ համայնքի Արվեստի դպրոց	Վարդանյան Հրաչ Լյուդվիգի (ՀՀԿ)
39/36	Վայոց Ձոր Արին, Դպրոց	Ավետիսյան Հովիկ Գարսեվանի (ԲՀԿ)
39/54	Վայոց Ձոր Գնդեվազ, Մշակույթի տուն	Ավագյան Ավագ (ՀՅԴ)
40/33	Տավուշ Ենոքավան, 1-ին փողոց, մշակույթի տուն	Սարդարյան Անժելա (ՕԵԿ)
40/35	Տավուշ Ակնաղբյուր, Դպրոց	Թիրաբյան Էդիկ Սարիբեկի (ՀՀԿ)

[1] Հիշարժան են այս ցուցակում գտնվող ընտրատեղամասերում գրանցված արդյունքները. մասնակցություն՝ 88.4 %, ՀՀԿ՝ 89.6 %, ԲՀԿ՝ 7.6 % և ՀԱԿ՝ 1.0 %, որոնք էականորեն տարբերվում են ընդհանուր արդյունքներից՝ բոլոր ընտրատեղամասերի հիման վրա ստացված արդյունքներից. մասնակցություն՝ 62.3 %, ՀՀԿ՝ 44.0 %, ԲՀԿ՝ 30.1 % և ՀԱԿ՝ 7.1 %.